



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

01.04.2026թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքների նախագծերը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. օրենքների նախագծերը,
2. օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումը,

3. գործող օրենքների փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքները:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան

Խնդրում եմ օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» 2024 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-498-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) ամբողջ տեքստից հանել «կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) **վարձու աշխատող՝** աշխատանքային պայմանագրին կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտին համապատասխան աշխատանքներ կատարող».

2) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) **բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր՝** Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որի՝ ավելացված արժեքի հարկի և (կամ) շրջանառության հարկի հարկային հաշվարկներով հայտարարագրած գործունեության բոլոր տեսակներից իրացման շրջանառության առնվազն 90 տոկոսը տվյալ հարկատեսակի համար օրենսդրությամբ սահմանված հաշվետու ժամանակաշրջանում ձևավորվել է բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակներից: Բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների որոշման համար հիմք են ընդունվում հաշվետու

ժամանակաշրջանում ներառված ամիսների և (կամ) եռամսյակի համար սույն կետում նշված յուրաքանչյուր հարկային հաշվարկով հայտարարագրած տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչները».

3) 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) **նոր աշխատող**՝ մասնագիտական աշխատանք կատարող այն վարձու աշխատողը, ով աշխատանքի ընդունման տարվան նախորդող չորս տարիների ընթացքում բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող գործատուի մոտ վարձու աշխատող չի հանդիսացել, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող գործատուի մոտ աշխատանքի է ընդունվել 2024 թվականի դեկտեմբերի 31-ից հետո».

4) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. **հաշվետու ժամանակաշրջան**՝ պետական աջակցության տրամադրման համար նախատեսված ժամանակաշրջան, որը հաշվարկվում է յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չորս եռամսյակներով՝ սկսվելով տվյալ տարվա սկզբից»

5) լրացնել նոր 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) **պետական աջակցության դադարեցում**՝ սույն օրենքով սահմանված դեպքերում սուբյեկտին պետական աջակցության տրամադրման դադարեցում սույն օրենքի գործողության ողջ ընթացքում»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 5. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության իրականացումը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգիչների, սահմանում է Կառավարությունը:

2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ նաև՝ տնտեսավարող սուբյեկտ), աշխատանքային միգրանտներին կամ այլ սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով: Աջակցության այլ ուղղություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով և այլ օրենսդրական ակտերով:

3. Լիազոր մարմինը, հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակայությունները, կարող է մշակել և Կառավարության հաստատմանը ներկայացնել աջակցության տրամադրման այլ կարգեր:

4. Կառավարության սահմանած պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է նոր աշխատողներ ներգրավելու համար: Ընդ որում՝

1) սույն մասով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է նոր աշխատողի համար հաշվարկած և հարկային մարմնին ներկայացրած եկամտային հարկի գումարի՝ 60 տոկոսի չափով:

2) նոր աշխատողի կարգավիճակը պահպանվում է նոր աշխատողին սույն օրենքի իմաստով մասնագիտական աշխատանքի ընդունման ամսվա 1-ից սկսած՝ օրացուցային օրերով հաշվարկված երրորդ տարին լրանալու օրը ներառող ամսվա վերջին օրը ներառյալ:

5. Կառավարության սահմանած պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների վարձու աշխատող աշխատանքային միգրանտին տրամադրվում է աջակցություն՝ իր համար հաշվարկած և հարկային մարմնին ներկայացված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով: Ընդ որում՝

1) աշխատանքային միգրանտին պետական աջակցության տրամադրման դիմումը ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտը և պետական աջակցության գումարը

փոխանցվում է տնտեսավարող սուբյեկտին, որպես միջնորդ՝ աշխատանքային միգրանտին փոխանցելու նպատակով:

2) տնտեսավարող սուբյեկտը պետական աջակցության գումարը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է աշխատանքային միգրանտին: Այս դեպքում պետական աջակցության գումարների մասով գործատու հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի, ինչպես նաև վարձու աշխատող աշխատանքային միգրանտի համար հարկային պարտավորություն չի առաջանում:

6. Սույն հոդվածով սահմանված պետական աջակցության տրամադրման դեպքում տվյալ նոր աշխատողի կամ աշխատանքային միգրանտի համար հաշվարկված եկամտային հարկի հաշվարկման, փոփոխության ինչպես նաև աշխատանքային միգրանտին պետական աջակցության գումարները չփոխանցելու ռիսկը կրում է տնտեսավարող սուբյեկտը:

7. Պետական աջակցություն ստացած նոր աշխատողի կամ աշխատանքային միգրանտի համար հաշվարկված եկամտային հարկի չափի փոփոխման դեպքում ավել վճարված գումարը տնտեսավարող սուբյեկտի կողմից ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, բացառությամբ այն դեպքի, երբ աշխատանքային միգրանտին ավել վճարված պետական աջակցության գումարի հաշվարկման հիմքում ի հայտ եկած հանգամանքը պայմանավորված է Լիազոր մարմնի կողմից պետական աջակցության գումարի չափի սխալ հաշվարկմամբ:

8. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պետական աջակցության տրամադրման ժամանակ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար պետական աջակցության գումարի ավել վճարված գումարը ենթակա է հաշվանցման հաջորդ հաշվետու ժամանակաշրջանների մասով տրամադրման ենթակա պետական աջակցության գումարից:

9. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պետական աջակցությունների տրամադրման կարգերը սահմանում է Կառավարությունը:

10. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում և շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերն աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 6. Պետական աջակցության համար դիմող սուբյեկտներին ներկայացվող պահանջները

1. Պետական աջակցության համար կարող են դիմել հետևյալ սուբյեկտները.

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունները, այդ թվում՝ դուստր ընկերությունները, իրավաբանական անձանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները.

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերը:

2. Պետական աջակցության համար դիմող տնտեսավարող սուբյեկտների, իսկ աշխատանքային միգրանտի համար դիմելու դեպքում՝ իր գործատու տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման ոլորտը պետք է համապատասխանի Կառավարության սահմանած՝ պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությանը կամ ներառի այն: Ընդ որում, սույն մասով սահմանված համապատասխանությունը որոշվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն ներկայացված հարկային հաշվարկներով՝ տվյալ հարկատեսակի մասով հաշվետու ժամանակաշրջանում ներկայացված հարկային յուրաքանչյուր հաշվարկով առանձին:

3. Սույն օրենքով սահմանված պահանջները բավարարող սուբյեկտները պետական աջակցությունը ստանում են կամավորության սկզբունքով՝ հարթակով դիմելու միջոցով:

4. Հարթակն ինքնաշխատ եղանակով բավարարում կամ մերժում է պետական աջակցության տրամադրումը:

5. Պետական աջակցության տրամադրման բավարարման դեպքում աջակցությունը ստացողի և լիազոր մարմնի միջև կնքվում է պայմանագիր, իսկ մերժման դեպքում հարթակով դիմողին է ներկայացվում պետական աջակցության տրամադրման մերժման մասին վարչական ակտը՝ լիազոր մարմնի գրության տեսքով:»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածի

1) 1-ին մասում լրացնել նոր 3.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1) տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ներառված ամիսների համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն հարկային հաշվարկ ներկայացված չէ.».

2) 1-ին մասի 4-րդ կետում «եկամուտների գծով» բառերից հետո լրացնել «ժամկետանց» բառը:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածի

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«1. Սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պետական աջակցության տրամադրումը դադարեցվում է, եթե՝

1) պետական աջակցություն ստանալու համար տնտեսավարող սուբյեկտը ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ,

2) տնտեսավարող սուբյեկտը կատարել է այնպիսի գործողություններ, որոնց չկատարման դեպքում հնարավոր չէր լինի պետական աջակցություն ստանալը կամ պետական աջակցության գումարի չափի ավելացումը,

3) պետական աջակցության տրամադրման տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տնտեսավարող սուբյեկտը նախորդող ժամանակաշրջանների մասով գրանցման հայտերում կատարել է մասնագիտական պաշտոնների դասակարգիչների փոփոխություն, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվել պետական աջակցության ստացման կամ պետական աջակցության չափի ավելացման համար,

4) պետական աջակցության տրամադրման տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տնտեսավարող սուբյեկտը նախորդող ժամանակաշրջանների մասով հարկային հաշվարկներում կատարել է տնտեսական գործունեության տեսակի դասակարգչի փոփոխություն, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվել պետական աջակցության ստացման կամ պետական աջակցության չափի ավելացման համար:».

2) 3-րդ մասում «տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է» բառերը փոխարինել «սուբյեկտը պարտավոր է» բառերով.

3) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Տնտեսավարող սուբյեկտը գրկվում է սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պետական աջակցություն ստանալու իրավունքից, եթե մեկ տարվա ընթացքում տվյալ սուբյեկտի մոտ հայտնաբերվել է դադարեցման հիմք հանդիսացող երկու և ավելի խախտման դեպք:»:

4) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքում լրացնել նոր՝ 8.1-ին հոդված հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 8.1. Պետական աջակցության տրամադրման բողոքարկումը

1. Պետական աջակցության համար դիմող սուբյեկտը հարթակում կարող է բողոքարկել աջակցության պատասխանը:

2. Բողոքարկման դիմումը քննարկվում է լիազոր մարմնի կողմից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Լիազոր մարմնի կողմից բողոքարկման դիմումի քննարկման ժամանակ լսումներ չեն անցկացվում: Լիազոր մարմինը ներկայացված բողոքը քննարկում է հարկային մարմնի կողմից տրամադրված տեղեկության, դիմումով ներկայացված փաստական հանգամանքների, ինչպես նաև լիազոր մարմնին հայտնի դարձած կամ սուբյեկտի կողմից տրամադրված այլ տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա:

4. Բողոքարկման դիմումի քննարկման արդյունքում կայացված վարչական ակտը կարող է բողոքարկվել դատական կարգով:»:

Հոդված 8. Օրենքի 9-րդ հոդվածի

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«1. Պետական աջակցություն ստացած, պետական աջակցության համար դիմած և մերժված, ինչպես նաև սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված դեպքերում պետական աջակցությունը դադարեցված սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:».

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 11-րդ հոդվածում լրացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Լիազոր մարմինը բնակչության պետական ռեգիստրից անձանց վերաբերյալ տվյալներ է ստանում պետական աջակցության տրամադրման նպատակով:»

Հոդված 10. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «անձանց» բառը փոխարինել «սուբյեկտներին» բառերով

2) լրացնել նոր 2.1-ին և 2.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Լիազոր մարմինն իրավասու է մոնիտորինգն իրականացնել տվյալ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող երեք տարիների հաշվետու ժամանակաշրջանների կտրվածքով:

2.2. Մոնիտորինգի արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքում լիազոր մարմնի նախաձեռնությամբ հարուցվում է վարչական վարույթ:»:

Հոդված 11. Օրենքի 14-րդ հոդվածի

1) 1-ին մասում «2026 թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով» բառերը փոխարինել «իր գործատու տնտեսավարող սուբյեկտի կողմից 2026 թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկված և հարկային մարմնին ներկայացրած» բառերով:

2) 4-րդ մասի «2025 թվականի հուլիսի 1-ը» բառերը և թվերը փոխարինել «2026 թվականի ապրիլի 1-ը» բառերով և թվերով, իսկ վերջին նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից սկսվող հաշվետու ժամանակաշրջանների վրա, բացառությամբ սույն օրենքի 7-րդ և 10-րդ հոդվածների, որոնց գործողությունը տարածվում է նաև 2025 թվականի չորրորդ եռամսյակի հաշվետու ժամանակաշրջանի վրա:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նոր աշխատողի կարգավիճակը պահպանվում է աշխատանքի ընդունման ամսվա 1-ից սկսած՝ օրացուցային օրերով հաշվարկված երրորդ տարին լրանալու օրը ներառող ամսվա վերջին օրը ներառյալ:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Տնտեսավարող սուբյեկտը կարող է դիմել պետական աջակցության համար 2025 թվականի հունվարի 1-ից հետո բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած նոր աշխատողի համար, եթե տվյալ նոր աշխատողի նախկին գործատու տնտեսավարող սուբյեկտը իր մասով չի ստացել պետական աջակցություն:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վերապաստրաստման հավաստագրերը գործում են և դրանով հնարավոր է աջակցություն ստանալ դրանց տրամադրման պահից 6 ամիս, բայց ոչ ավելին քան 2026 թվականի երկրորդ եռամսյակը ներառող հաշվետու ժամանակաշրջանը:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանին առնչվող կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված վարչական վարույթում քննարկվող ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական ատյաններում քննվող գործերի նկատմամբ:

ՏԵՂԵԿԱԼՔ

«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈԲՈՒՅՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **բարձր տեխնոլոգիաներ**՝ նոր հնարավորությունների, տեղեկատվության, գիտելիքի, փորձի, նյութական միջոցների ամբողջություն, որը միտված է տնտեսությունում մրցունակ արտադրանք մշակելուն, ստեղծելուն, արտադրելուն, և որի հիմքում դրված են գիտատեխնիկական նորարարությունները, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաները.

2) **տեղեկատվական տեխնոլոգիաներ**՝ համակարգչային հիմքի վրա, մասնավորապես ծրագրային ապահովման, սպասարկման կամ կառավարման տեղեկատվական համակարգեր, ինչպես նաև բոլոր ձևաչափերով տեղեկատվություն, ներառյալ տվյալներ, պատկերներ (շարժական, անշարժ) ստեղծելու, փոխակերպելու, պահպանելու, պաշտպանելու, մշակելու, փոխանցելու և անվտանգ հայթայթելու համար օգտագործվող տեխնոլոգիաների բոլոր տեսակները.

3) **հարթակ**՝ ինքնաշխատ ծրագրային համակարգ, որի միջոցով ներկայացվում են համապատասխան դիմումները, ու կազմակերպվում է պետական աջակցության տրամադրումը.

4) **վարձու—աշխատող**՝ աշխատանքային կամ քաղաքացիական իրավական պայմանագրին համապատասխան աշխատանքներ կատարող

4) **վարձու աշխատող**՝ աշխատանքային պայմանագրին կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտին համապատասխան աշխատանքներ կատարող.

5) **բարձր-տեխնոլոգիաների-ոլորտի-կազմակերպություն**՝ կամ—անհատ—ձեռնարկատեր՝ Հայաստանի Հանրապետության ղեկավարող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որի՝ ավելացված արժեքի հարկի և (կամ) շրջանառության հարկի—հարկային հաշվարկներով հայտարարագրած գործունեության բոլոր տեսակներից—իրացման շրջանառության առնվազն—90—տոկոսը պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջանում ձևավորվել է բարձր-տեխնոլոգիաների-ոլորտի-գործունեության տեսակներից: Բարձր-տեխնոլոգիաների-ոլորտի-գործունեության տեսակների-որոշման համար հիմք են ընդունվում—նշված—հաշվարկներով—(հաշվետվությամբ)—հայտարարագրած—տնտեսական գործունեության տեսակների-դասակարգիչները

5) **բարձր տեխնոլոգիաների-ոլորտի-կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր**՝ Հայաստանի Հանրապետության ղեկավարող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որի՝ ավելացված արժեքի հարկի և (կամ) շրջանառության հարկի հարկային հաշվարկներով հայտարարագրած գործունեության բոլոր տեսակներից իրացման շրջանառության առնվազն 70 տոկոսը տվյալ հարկատեսակի համար օրենսդրությամբ սահմանված հաշվետու ժամանակաշրջանում ձևավորվել է բարձր տեխնոլոգիաների-ոլորտի գործունեության տեսակներից: Բարձր տեխնոլոգիաների-ոլորտի գործունեության տեսակների որոշման համար հիմք են ընդունվում հաշվետու ժամանակաշրջանում ներառված ամիսների և (կամ) եռամսյակի համար սույն կետում նշված յուրաքանչյուր հարկային հաշվարկով հայտարարագրած տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչները.

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

6) լիազոր մարմին՝ բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող լիազոր մարմին:

7) **պետական աջակցություն**՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին կամ այլ սուբյեկտներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն տրամադրվող գումար:

8) **մասնագիտական աշխատանք**՝ Կառավարության սահմանած ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմի մասնագիտական աշխատանք:

9) **աշխատանքային միգրանտ**՝ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետությունում օրինական աշխատանքային իրավունք ունեցող մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատող: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող երկքաղաքացին սույն օրենքի իմաստով աշխատանքային միգրանտ չի համարվում:

10) **նոր-աշխատող**՝ առաջին-անգամ-բարձր-տեխնոլոգիաների-ոլորտ-մուտք-գործած-և-մասնագիտական աշխատանք-կատարող-վարձու-աշխատող:

10) **նոր աշխատող**՝ մասնագիտական աշխատանք կատարող այն վարձու աշխատողը, ով աշխատանքի ընդունման տարվան նախորդող չորս տարիների ընթացքում բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող գործատուի մոտ վարձու աշխատող չի հանդիսացել, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող գործատուի մոտ աշխատանքի է ընդունվել 2024 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

11) **հաշվետու ժամանակաշրջան**՝ պետական աջակցության տրամադրման հաշվետու ժամանակաշրջան, որը հաշվարկվում է եռամսյակներով:

11) **հաշվետու ժամանակաշրջան**՝ պետական աջակցության տրամադրման համար նախատեսված ժամանակաշրջան, որը հաշվարկվում է յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չորս եռամսյակներով՝ սկսվելով տվյալ տարվա սկզբից:

12) **պետական աջակցության դադարեցում**՝ սույն օրենքով սահմանված դեպքերում սուբյեկտին պետական աջակցության տրամադրման դադարեցում սույն օրենքի գործողության ողջ ընթացքում:

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Ձեռնարկ-5. Բարձր-տեխնոլոգիաների ոլորտի-պետական-աջակցության իրականացումը

Formatted Table

1. Բարձր-տեխնոլոգիաների-ոլորտի-պետական-աջակցության-ենթակա-գործունեության-տեսակները՝ ըստ տնտեսական-գործունեության-դասակարգիչների-սահմանում-է-Կառավարությունը:

2. Բարձր-տեխնոլոգիաների-ոլորտի-կազմակերպություններին-կամ-անհատ-ձեռնարկատերերին-(այսուհետ նաև՝ տնտեսավարող-սուբյեկտ)՝ կամ-այլ-սուբյեկտներին-պետական-աջակցությունը-տրամադրվում-է-սույն օրենքով: Աջակցության-այլ-ուղղություններ-կարող-են-սահմանվել-Հայաստանի-Հանրապետության-հարկային օրենսգրքով-և-այլ-օրենսդրական-ակտերով:

3. Լիազոր-մարմինը-հաշվի-առնելով-բարձր-տեխնոլոգիաների-ոլորտի-զարգացման-գերակայությունները, կարող է-մշակել-և-Կառավարության-հաստատմանը-ներկայացնել-աջակցության-տրամադրման-այլ-կարգեր:

4. — Կառավարության — սահմանած — պետական — աջակցության — ենթակա — տնտեսական — գործունեության
հասակագրիչներով — սահմանված — գործունեությանը — զբաղվող — տնտեսավարող — սուբյեկտներին — պետական
աջակցությունը — տրամադրվում է՝

1) — աշխատանքային միգրանտներին — համար — դրոշ — իրականացնում — են — մասնագիտական — աշխատանք — և
համարվում — են — տվյալ — տնտեսավարող — սուբյեկտի — վարձու — աշխատողները։ Սույն — կետով — սահմանված — պետական
աջակցությունը — տնտեսավարող — սուբյեկտին — տրամադրվում է — աշխատանքային — միգրանտին — աշխատավարձի — և
դրան — հավասարեցված — այլ — վճարումներին — կամ — քաղաքացիական — իրավական — պայմանագրով — աշխատանքի
վարձատրության — գծով — հաշվարկված — եկամտային — հարկի — գումարի — 60 — տոկոսի — չափով։

2) — նոր — աշխատողներ — ներգրավելու — համար։ Սույն — կետով — սահմանված — պետական — աջակցությունը
տնտեսավարող — սուբյեկտին — տրամադրվում է — նոր — աշխատողի — աշխատավարձի — և — դրան — հավասարեցված — այլ
վճարումներին — կամ — քաղաքացիական — իրավական — պայմանագրով — աշխատանքի — վարձատրության — գծով
հաշվարկված — եկամտային — հարկի — գումարի — 60 — տոկոսի — չափով։

3) — Կառավարության — սահմանած — պետական — աջակցության — ենթակա — տնտեսական — գործունեության
հասակագրիչներով — սահմանված — գործունեության — իրականացնելու — համար — անհրաժեշտ — մասնագիտական
աշխատանք — կատարող — կարգերի — պատրաստման — և — վերապատրաստման — (այսուհետ — վերապատրաստում)
համար։ Սույն — կետով — սահմանված — պետական — աջակցությունը — տնտեսավարող — սուբյեկտին — տրամադրվում է —
վերապատրաստում — անցած — մասնագիտական — աշխատանք — կատարող — վարձու — աշխատողի — աշխատավարձի — և
դրան — հավասարեցված — այլ — վճարումներին — կամ — քաղաքացիական — իրավական — պայմանագրով — աշխատանքի
վարձատրության — գծով — հաշվետու — ժամանակաշրջանում — հաշվարկված — եկամտային — հարկի — գումարի — 50 — տոկոսի
չափով։

5. — Կառավարության — սահմանած — պետական — աջակցության — ենթակա — տնտեսական — գործունեության
հասակագրիչներով — սահմանված — գործունեությանը — զբաղվող — տնտեսավարող — սուբյեկտներին — վարձու — աշխատող
աշխատանքային — միգրանտին — տրամադրվում է — աջակցություն — իր — աշխատավարձի — և — դրան — հավասարեցված — այլ
վճարումներին — կամ — քաղաքացիական — իրավական — պայմանագրով — աշխատանքի — վարձատրության — գծով
հաշվարկված — եկամտային — հարկի — գումարի — 60 — տոկոսի — չափով։

6. — Սույն — հոդվածի 4 — դր — մասի 3 — դր — կետով — սահմանված — վերապատրաստումը — աշխատողի — մասնագիտական
նոր — գիտելիքներին — ձեռքբերումը — և — շարունակական — կատարելագործում — է, — որը — հավաստվում է —
վերապատրաստում — իրականացող — համապատասխան — մասնագիտական — կենտրոնի — տրամադրած
փաստաթղթով։

7. — Սույն — հոդվածի 4 — դր — մասի 3 — դր — կետի — կիրառության — դեպքում — տնտեսավարող — սուբյեկտի — ներկայացրած
վերապատրաստման — հիմնավորումներ — ակտիվորեն — և — ընդունվում — են — փազոր — մարմնի — սահմանած — կարգով։

8. — Սույն — հոդվածի 4 — դր — մասի 1 — ին, 2 — դր, 3 — դր — կետերով — և — 5 — դր — մասով — սահմանված — հաշվետու
ժամանակաշրջանի — համար — տրամադրվող — պետական — աջակցություններին — հանրագումարը — չի — կարող
գերազանցել — նույն — հաշվետու — ժամանակաշրջանի — մասով — տվյալ — տնտեսավարող — սուբյեկտի — բոլոր
աշխատողներին — գծով — հաշվարկված — եկամտային — հարկի — գումարի — 50 — տոկոսը։

9. — Սույն — հոդվածի 4 — դր — մասի 2 — դր — կետով — սահմանված — նոր — աշխատողներին — մասով — պետական
աջակցությունը — տրամադրվում է — վարձու — աշխատողի — առաջին — անգամ — մասնագիտական — աշխատանքի — անցնելու
պահից — երեք — օրացուցային — տարիներին — համար։

10. — Սույն — հոդվածի 4 — դր — և — 5 — դր — մասերով — սահմանված — պետական — աջակցություններին
տրամադրման — կարգերը — սահմանում է — Կառավարությունը։

11. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում և շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերն աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում:

Հոդված 5. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության իրականացումը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգիչների, սահմանում է Կառավարությունը:

2. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ նաև՝ տնտեսավարող սուբյեկտ), աշխատանքային միգրանտներին կամ այլ սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով: Աջակցության այլ ուղղություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով և այլ օրենսդրական ակտերով:

3. Լիազոր մարմինը, հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակայությունները, կարող է մշակել և Կառավարության հաստատմանը ներկայացնել աջակցության տրամադրման այլ կարգեր:

4. Կառավարության սահմանած պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությանը զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է նոր աշխատողներ ներգրավելու համար: Ընդ որում՝

1) սույն մասով սահմանված պետական աջակցությունը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է նոր աշխատողի համար հաշվարկված և հարկային մարմնին ներկայացրած եկամտային հարկի գումարի՝ 60 տոկոսի չափով:

2) նոր աշխատողի կարգավիճակը պահպանվում է նոր աշխատողին սույն օրենքի իմաստով մասնագիտական աշխատանքի ընդունման ամսվա 1-ից սկսած՝ օրացուցային օրերով հաշվարկված երրորդ տարին լրանալու օրը ներառող ամսվա վերջին օրը ներառյալ:

5. Կառավարության սահմանած պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությանը զբաղվող տնտեսավարող սուբյեկտների վարձու աշխատող աշխատանքային միգրանտին տրամադրվում է աջակցություն՝ իր համար հաշվարկված և հարկային մարմնին ներկայացված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով: Ընդ որում՝

1) աշխատանքային միգրանտին պետական աջակցության տրամադրման դիմումը ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտը և պետական աջակցության գումարը փոխանցվում է տնտեսավարող սուբյեկտին, որպես միջնորդ՝ աշխատանքային միգրանտին փոխանցելու նպատակով:

2) տնտեսավարող սուբյեկտը պետական աջակցության գումարը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է աշխատանքային միգրանտին: Այս դեպքում պետական աջակցության գումարների մասով գործատու հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի ինչպես նաև վարձու աշխատող աշխատանքային միգրանտի համար հարկային պարտավորություն չի առաջանում:

6. Սույն հոդվածով սահմանված պետական աջակցության տրամադրման դեպքում տվյալ նոր աշխատողի կամ աշխատանքային միգրանտի համար հաշվարկված եկամտային հարկի հաշվարկման, փոփոխության ինչպես նաև աշխատանքային միգրանտին պետական աջակցության գումարները փոխանցելու դեպք կրում է տնտեսավարող սուբյեկտը:

Formatted: Font: Not Bold

7. Պետական աջակցություն ստացած նոր աշխատողի կամ աշխատանքային միգրանտի համար հաշվարկված եկամտային հարկի չափի փոփոխման դեպքում ավել վճարված գումարը տնտեսավարող անհատի կողմից ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, բացառությամբ այն դեպքի, երբ աշխատանքային միգրանտին ավել վճարված պետական աջակցության գումարի հաշվարկման հիմքում ի հայտ եկած հանգամանքը պայմանավորված է Լիազոր մարմնի կողմից պետական աջակցության գումարի չափի սխալ հաշվարկմամբ:

8. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պետական աջակցության տրամադրման ժամանակ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար պետական աջակցության գումարի ավել վճարված գումարը ենթակա է հաշվանցման հաջորդ հաշվետու ժամանակաշրջանների մասով տրամադրման ենթակա պետական աջակցության գումարից:

9. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պետական աջակցությունների տրամադրման կարգերը սահմանում է Կառավարությունը:

10. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում և շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերն աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում:

Formatted: Font: Not Bold

Հոդված 6. Տնտեսավարող-սուբյեկտներին ներկայացվող պահանջները

Formatted: Armenian

1. Պետական աջակցության համար կարող են դիմել հետևյալ տնտեսավարող-սուբյեկտները:

Formatted: Armenian

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունները:

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերը:

2. Պետական աջակցության համար դիմող տնտեսավարող-սուբյեկտների գործունեության իրականացման հոգսը պետք է համապատասխանի՝ Կառավարության սահմանած՝ պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությանը կամ ներառի այն:

3. Սույն օրենքով սահմանված պահանջները՝ բավարարող տնտեսավարող-սուբյեկտները պետական աջակցություն ստանալու համար դիմում են կամավորության սկզբունքով՝ հարթակի միջոցով:

4. Տնտեսավարող-սուբյեկտները՝ պետական աջակցություն ստանալու համար հարթակի միջոցով ներկայացնում են՝ դիմում: Պետական աջակցության համար՝ դիմելու՝ կարգը և՝ դիմումին՝ ներկայացվող պահանջները սահմանում է փազոր մարմինը:

5. Հարթակն ինքնաշխատ եղանակով բավարարում կամ մերժում է՝ պետական աջակցության տրամադրումը:

Հոդված 6. Պետական աջակցության համար դիմող սուբյեկտներին ներկայացվող պահանջները

1. Պետական աջակցության համար կարող են դիմել հետևյալ սուբյեկտները:

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունները, այդ թվում՝ դուստր ընկերությունները, իրավաբանական անձանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները:

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերը:

2. Պետական աջակցության համար դիմող տնտեսավարող սուբյեկտների, իսկ աշխատանքային միգրանտի համար դիմելու դեպքում՝ իր գործատու տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման ոլորտը պետք է համապատասխանի Կառավարության սահմանած՝ պետական աջակցության ենթակա տնտեսական գործունեության դասակարգիչներով սահմանված գործունեությանը կամ ներառի այն: Ընդ որում, սույն մասով սահմանված համապատասխանությունը որոշվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն ներկայացված հարկային հաշվարկներով՝ տվյալ հարկատեսակի մասով հաշվետու ժամանակաշրջանում ներկայացված հարկային յուրաքանչյուր հաշվարկով առանձին:

3. Սույն օրենքով սահմանված պահանջները բավարարող սուբյեկտները պետական աջակցությունը ստանում են կամավորության սկզբունքով՝ հարթակով դիմելու միջոցով:

4. Հարթակին ինքնաշխատ եղանակով բավարարում կամ մերժում է պետական աջակցության տրամադրումը:

5. Պետական աջակցության տրամադրման բավարարման դեպքում աջակցությունը ստացողի և լիազոր մարմնի միջև կնքվում է պայմանագիր, իսկ մերժման դեպքում հարթակով դիմողին է ներկայացվում պետական աջակցության տրամադրման մերժման մասին վարչական ակտը՝ լիազոր մարմնի գրության տեսքով:

Հոդված 7. Պետական աջակցության տրամադրման մերժման հիմքերը

1. Պետական աջակցության տրամադրման դիմումը մերժվում է, եթե՝

1) դիմող տնտեսավարող սուբյեկտը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված՝ պետական աջակցություն ստանալու իրավունք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվող պահանջներին:

2) դիմող տնտեսավարող սուբյեկտի 51 տոկոս և ավելի բաժնեմասի բաժնետերեր կամ մասնակիցը կամ անհատ ձեռնարկատերը հանդիսանում է սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ պետական աջակցության իրավունքից զրկված տնտեսավարող սուբյեկտի 51 և ավելի բաժնեմասի բաժնետեր կամ մասնակից կամ անհատ ձեռնարկատեր:

3) պետական աջակցություն ստանալու համար ներկայացված տվյալները թերի են կամ չեն համապատասխանում սույն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

3.1) տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ներառված ամիսների համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն հարկային հաշվարկ ներկայացված է:

4) դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ դիմող տնտեսավարող սուբյեկտն ունի 100 հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

Formatted: Armenian

Formatted: Armenian

Հոդված 8. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության դադարեցումը

1.—Առյւն—օրենքի—5-րդ—հոդվածի—4-րդ—մասով—սահմանված—պետական—աջակցության—տրամադրումը դադարեցվում է, եթե պետական աջակցություն ստանալու համար տնտեսավարող սուբյեկտը ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ:

Առյւն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պետական աջակցության տրամադրումը դադարեցվում է, եթե՝

1) պետական աջակցություն ստանալու համար տնտեսավարող սուբյեկտը ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ,

2) տնտեսավարող սուբյեկտը կատարել է այնպիսի գործողություններ, որոնց չկատարման դեպքում հնարավոր չէր լինի պետական աջակցություն ստանալը կամ պետական աջակցության գումարի չափի ավելացումը,

3) պետական աջակցության տրամադրման տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տնտեսավարող սուբյեկտը նախորդող ժամանակաշրջանների մասով գրանցման հայտերում կատարել է մասնագիտական պաշտոնների դասակարգիչների փոփոխություն, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվել պետական աջակցության ստացման կամ պետական աջակցության չափի ավելացման համար,

4) պետական աջակցության տրամադրման տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տնտեսավարող սուբյեկտը նախորդող ժամանակաշրջանների մասով հարկային հաշվարկներում կատարել է տնտեսական գործունեության տեսակի դասակարգչի փոփոխություն, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվել պետական աջակցության ստացման կամ պետական աջակցության չափի ավելացման համար:

2. Պետական աջակցության դադարեցման մասին որոշումն ընդունում է լիազոր մարմնի ղեկավարը՝ «Վարչարարության և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված համապատասխան վարչական ակտի հիման վրա:

3. Պետական աջակցության դադարեցման դեպքում պետական աջակցություն ստացած տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է սույն հոդվածի 2-րդ մասում նշված վարչական ակտի մասին իրազեկվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել խախտումը ներառող ժամանակաշրջանում սույն օրենքի շրջանակում կոնկրետ դեպքով աջակցության համար տրամադրված գումարները:

4. Տնտեսավարող սուբյեկտը գրկվում է սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պետական աջակցություն ստանալու իրավունքից, եթե մեկ տարվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտի մոտ հայտնաբերվել է դադարեցման հիմք հանդիսացող երկու և ավելի խախտման դեպք:

4. Տնտեսավարող սուբյեկտը գրկվում է սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պետական աջակցություն ստանալու իրավունքից, եթե մեկ տարվա ընթացքում տվյալ սուբյեկտի մոտ հայտնաբերվել է դադարեցման հիմք հանդիսացող երկու և ավելի խախտման դեպք:

5.—Լիազոր մարմինը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտի կայացումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ տնտեսավարող սուբյեկտի մասին տվյալները հրապարակում է իր պաշտոնական կայքում:

Հոդված 8.1. Պետական աջակցության տրամադրման բողոքարկումը

1. Պետական աջակցության համար դիմող սուբյեկտը հարթակում կարող է բողոքարկել աջակցության պայտասխանը:

2. Բողոքարկման դիմումը քննարկվում է լիազոր մարմնի կողմից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին մասին» օրենքով սահմանված կարգում և ժամկետներում:

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

3. Լիազոր մարմնի կողմից բողոքարկման դիմումի ըննարկման ժամանակ լսումներ չեն անցկացվում: Լիազոր մարմինը ներկայացված բողոքը ըննարկում է հարկային մարմնի կողմից տրամադրված տեղեկության, դիմումով ներկայացված փաստական հանգամանքների, ինչպես նաև լիազոր մարմնին հայտնի դարձած կամ սուբյեկտի կողմից տրամադրված այլ տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա:

4. Բողոքարկման դիմումի ըննարկման արդյունքում կայացված վարչական ակտը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Հոդված 9. Հրապարակայնությունը

1. Պետական-աջակցություն-ստացած, ինչպես նաև-աջակցության-համար-դիմած-և-մերժված-անձանց ցանկը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

1. Պետական աջակցություն ստացած, պետական աջակցության համար դիմած և մերժված, ինչպես նաև սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված դեպքերում պետական աջակցությունը դադարեցված սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

2. Լիազոր մարմնի պաշտոնական կայքում հրապարակվում են նաև սույն օրենքի պահանջները խախտած տնտեսավարող սուբյեկտների անվանումները:

Հոդված 11. Տեղեկությունների տրամադրումը

1. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցում (հաշվառում) իրականացնող մարմինը յուրաքանչյուր եռամսյակ լիազոր մարմին է ներկայացնում բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները՝ Կառավարության սահմանած կարգով:

2. Պետական եկամուտների կոմիտեի կողմից լիազոր մարմնին տրամադրվող տեղեկությունների շրջանակը և տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են լիազոր մարմնի ղեկավարի և Պետական եկամուտների կոմիտեի ղեկավարի համատեղ իրավական ակտով:

3. Լիազոր մարմինը բնակչության պետական ռեգիստրից անձանց, վերաբերյալ տվյալներ է ստանում պետական աջակցության տրամադրման նպատակով:

Հոդված 13. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մոնիտորինգը

1. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման, պետական աջակցություն ստացած անձանց սուբյեկտներին ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով լիազոր մարմինն իրականացնում է մոնիտորինգ:

2. Մոնիտորինգն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքման, տվյալների ստուգման, համեմատման, գնահատման, վերլուծությունների իրականացման միջոցով:

2.1. Լիազոր մարմինն իրավաբան է մոնիտորինգն իրականացնել տվյալ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող երեք տարիների հաշվետու ժամանակաշրջանների կտրվածքով:

2.2. Մոնիտորինգի արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքում լիազոր մարմնի նախաձեռնությամբ հարուցվում է վարչական վարույթ:

3. Մոնիտորինգի իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

Formatted: Armenian

Հոդված 14. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է աշխատանքային միգրանտ հանդիսացող վարձու աշխատողի համար 2026-թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով իր գործատու տնտեսավարող սուբյեկտի կողմից 2026 թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկված և հարկային մարմնին ներկայացրած եկամտային հարկի նկատմամբ:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը և կիրառվում է աշխատանքային միգրանտ հանդիսացող վարձու աշխատողի համար մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գծով եկամտային հարկի նկատմամբ:

Formatted: Armenian

3. Սույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

4. Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հարթակը գործարկվում է ոչ ուշ, քան 2025-թվականի հոկտեմբերի 1-ը 2026 թվականի ապրիլի 1-ը: Մինչև հարթակի գործարկումը տնտեսավարող սուբյեկտներից դիմումներն ընդունվում և մշակվում են լիազոր մարմնի ղեկավարի հաստատած կարգով:

Formatted: Armenian

Formatted: Armenian

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական
աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-245-Ն օրենքն ուժը
կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱԼՔ

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության հիմնական սկզբունքները և կարգավորում է այդ ոլորտում պետական աջակցության իրականացման համակարգի ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենսդրությունը

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից և այլ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **տեղեկատվական տեխնոլոգիաներ**՝ համակարգչային հիմքի վրա, մասնավորապես՝ ծրագրային ապահովման, սպասարկման կամ կառավարման տեղեկատվական համակարգեր, ինչպես նաև բոլոր ձևաչափերով տեղեկատվություն, ներառյալ՝ տվյալներ, պատկերներ (շարժական, անշարժ)՝ ստեղծելու, փոխակերպելու, պահպանելու, պաշտպանելու, մշակելու, փոխանցելու և անվտանգ հայթայթելու համար օգտագործվող տեխնոլոգիաների բոլոր տեսակները:

2) **պետական աջակցության ենթակա գործունեության տեսակներ**՝

ա. ծրագրային ապահովման մշակում, որը ներառում է ծրագրային ապահովման ստեղծումը, փոփոխությունների կատարումը, փորձարկումը և աջակցումը, պատվիրատուների համար կիրառական ծրագրերի ստեղծումը, համակարգերի ծրագրային ապահովման, կիրառական ծրագրերի, տվյալների հիմնապահեստների, վեբկայքերի կառուցվածքի ու բովանդակության մշակումը և (կամ) մշակման և գործարկման համար անհրաժեշտ մեքենայական հրամանների ստեղծումը, ծրագրային ապահովման սարքաբեռումը՝ որոշակի գործառնությունների իրականացման համար մշակված կիրառական ծրագրերի վերափոխումը և հարմարեցումը պատվիրատուների տեղեկատվական համակարգի միջավայրին,

բ. խորհրդատվական գործունեություն՝ համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում, որը ներառում է համակարգչային տեխնիկական միջոցների, ծրագրային ապահովման և կապի տեխնոլոգիաների ինտեգրված համակարգչային համակարգերի մշակումը և նախագծումը, օգտվողների ուսուցման հետ կապված ծառայությունները,

գ. համակարգչային համակարգերի կառավարման գործունեություն, որը ներառում է ներգանցային կառավարումը և պատվիրատուների համար համակարգչային համակարգերի ստեղծումը և (կամ) տվյալների մշակման տեխնիկական միջոցների սպասարկումը և աջակցման այլ ծառայություններ,

դ. տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն, որը ներառում է ցանցում կայքերի տեղաբաշխման ենթակառուցվածքների ապահովումը, տվյալների մշակումը (օգտագործողների տրամադրած կամ բնօրինակ ծրագրերի կիրառմամբ տվյալների լրիվ մշակումը, տվյալների ավտոմատացված մշակումն ու ներանցումն ապահովող ծառայությունները, ներառյալ՝ տվյալների հիմնապահեստների կառավարման ծառայությունները) և հարակից ծառայությունները, կայքերի տեղաբաշխման հետ կապված մասնագիտացված ծառայությունները (hosting service)՝ ինտերնետ ցանցում կայքերի տեղաբաշխում (Web hosting), տվյալների հոսքնթաց փոխանցում (չբաժանված՝ ըստ փաթեթների) կամ կիրառական ծրագրերի տեղաբաշխում, ծրագրային և ապարատային ռեսուրսների գործարկում, ընդհանուր ժամանակի տարանջատման ռեժիմում գործող կենտրոնական (համընդհանուր) համակարգչի միջոցով օգտվողների սպասարկում:

ե. վեր պորտալների հետ կապված գործողություններ, որոնք ներառում են գործողություններ՝ կապված վերկայքերի հետ՝ որոշակի ձևաչափով ինտերնետում տեղադրված տվյալների ծավալուն հիմնապահեստների ձևավորման և սպասարկման համար որոնման համակարգերի կիրառում՝ հասցեներով կամ բովանդակությամբ հեջտ և հասանելի որոնում կազմակերպելու նպատակով, գործողություններ՝ կապված այլ վերկայքերի հետ, որոնք գործում են որպես ինտերնետի պորտալ, ինչպես, օրինակ, պարբերաբար թարմացվող տեղեկատվություն ապահովող լրատվական կայքերը:

զ. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կրթական, հետազոտական ծրագրերի իրականացում,

է. էլեկտրոնային համակարգերի նախագծում, թեստավորում և արտադրություն, համակարգչային անիմացիա և մոդելավորում, ինչպես նաև ինտեգրային սխեմաների նախագծում և թեստավորում:

3) **տնտեսավարող սուբյեկտ**՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձինք, իրավաբանական անձի մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները, անհատ ձեռնարկատերերը:

4) **աքսելերատորներ, ինկուբատորներ**՝ կազմակերպություններ, որոնք աջակցում են սկսնակ և փոքր կազմակերպությունների նորարարական նախագծերին դրանց զարգացման բոլոր փուլերում՝ տրամադրելով խորհրդատվություն և (կամ) այլ ռեսուրսներ:

5) **տեխնոլարկ, տեխնոկենտրոն**՝ իրավաբանական անձ կամ համատեղ գործունեության վերաբերյալ պայմանագրային հիմունքներով կազմակերպված իրավաբանական անձանց (մասնակիցների) միություն, որի գլխավոր խնդիրն է ինովացիոն միջավայրի ձևավորման՝ համապատասխան նյութատեխնիկական, ֆինանսական բազայի ստեղծման միջոցով ներդրումային և ինովացիոն ծրագրերի իրականացումը, գիտատար մշակումների, բարձր տեխնոլոգիաների ներդրմանն ու համաշխարհային շուկայում մրցունակ ապրանքի արտադրությանն ուղղված գործունեությունը:

6) **հավաստագիր**՝ հարկային արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:

7) **հավաստագրող հանձնաժողով**՝ սույն օրենքով սահմանված կարգով հավաստագրի տրամադրման, փոփոխման, հավաստագրի տրամադրումը մերժելու, գործողությունը դադարեցնելու իրավասություն ունեցող հանձնաժողով:

8) **հավաստագրված անձ**՝ սույն օրենքով սահմանված կարգով հավաստագիր ստացած տնտեսավարող սուբյեկտ:

9) **կանոնադրական կապիտալում ուղղակի մասնակցություն**՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայերի սեփականատեր:

10) **կանոնադրական կապիտալում անուղղակի մասնակցություն**՝ սույն օրենքի իմաստով անուղղակի մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում՝

ա. մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ) կամ ունի ծայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները:

բ. մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ) կամ ծայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները՝ տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իր ունեցած պահանջի իրավունքի ուժով:

գ. մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50 տոկոս և ավելի մասնակցություն:

դ. մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի մասնակցություն և իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները:

11) **Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր**՝ համարվում են Հայաստանի Հանրապետության այն ղեկավարող փրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնց գործունեության բոլոր տեսակներից իրացման շրջանառության առնվազն 70%-ը ձևավորվել է սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գործունեության տեսակներից, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով հավաստագրման համար դիմելու իրավունք ունեցող կամ հավաստագրված տնտեսավարող սուբյեկտները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

(3-րդ հոդվածը լրաց. 23.04.19 ՀՕ-22-Ն)

Հոդված 4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության սկզբունքները և նպատակները

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցությունը իրականացվում է պետության և մասնավոր հատվածի համագործակցության, ինչպես նաև հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

2. Պետական աջակցության նպատակն է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում՝

1) մրցունակության բարձրացումը:

2) հմուտ աշխատուժի ներգրավումը և հմտությունների շարունակական բարձրացումը՝ մրցունակ աշխատավարձերի (եկամուտների) ապահովման միջոցով:

3) դրամաշնորհային ծրագրերով գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և սկսնակ կազմակերպությունների կայացմանն օժանդակումը:

4) վենչուրային և օտարերկրյա ներդրումների խթանումը և ներգրավումը:

Հոդված 5. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության սուբյեկտները

1. Սույն օրենքի շրջանակներում պետական աջակցություն են ստանում հետևյալ տնտեսավարող սուբյեկտները:

1) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սկսնակ տնտեսավարող սուբյեկտները:

2) նորարարական և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները:

3) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը խթանող ենթակառուցվածքները, այդ թվում՝ տեխնոպարկերը, տեխնոկենտրոնները, աքսելերատորները, ինկուբատորները:

4) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում՝ կրթական, հետազոտական ծրագրեր իրականացնող տնտեսավարող սուբյեկտները:

Հոդված 6. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության իրականացումը

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցությունն իրականացվում է հավաստագրման եղանակով՝ հարկային արտոնություններ տրամադրելու միջոցով կամ կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրամադրվող պետական աջակցության այլ ձևերով:

2. Հարկային արտոնությունները տրամադրվում են հավաստագրված անձանց՝ Հայաստանի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող օրենքով սահմանված չափով և սույն օրենքով սահմանված ժամանակահատվածի ընթացքում:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակայությունները, մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատման է ներկայացնում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ընդգրկված կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության այլ ձևերի տրամադրման կարգերը:

(6-րդ հոդվածը փոփ. 23.04.19 ՀՕ-22-Ն, խմբ. 16.12.22 ՀՕ-570-Ն)

Հոդված 7.

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրը

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար ճյուղային հաշվառում իրականացնելու նպատակով պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը վարում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրը (այսուհետ՝ վարչական ռեգիստր):

2. Վարչական ռեգիստրը ներառում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) տնտեսավարող սուբյեկտների փաստացի գործունեության կամ տնտեսավարող սուբյեկտի կառավարման գործադիր մարմնի վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների քանակի, օտարերկրյա մասնակցության, արտադրված արտադրանքի, մատուցված ծառայությունների ծավալի, արտահանման, ներդրումների (այդ թվում՝ օտարերկրյա), եկամուտների, ներմուծման և այլ անհրաժեշտ ցուցանիշների մասին շարունակական արդիականացման ենթակա տվյալների բազա:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրը ստեղծվում է հարկային մարմինների, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, ոլորտի զարգացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակված և տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների հաշվետվությունների հիման վրա:

4. Տնտեսավարող սուբյեկտների հաշվետվությունների ձևերը և ներկայացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը:

5. Կախված հավաքվող ցուցանիշների բնույթից՝ հաշվետվությունները ներկայացվում են անսակն, եռամսյակային կամ կիսամյակային պարբերականությամբ, որը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Հոդված 8.

Հավաստագրվող և հավաստագրված տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվող պահանջները

1. Հավաստագրումն իրականացվում է կամավորության սկզբունքով:

2. Հավաստագրման համար կարող են դիմել հետևյալ տնտեսավարող սուբյեկտները.

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունները, բացառությամբ տնտեսական ընկերակցությունների և դուստր ընկերությունների, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների:

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերը:

3. Հավաստագրման համար դիմող տնտեսավարող սուբյեկտները պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

1) ստեղծվել են բացառապես սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գործունեության տեսակների ներքո գործունեություն իրականացնելու նպատակով:

2) չեն ստեղծվել այլ տնտեսավարող սուբյեկտի վերակազմակերպման արդյունքում:

3) բաժնետերերից (մասնակիցներից) որևէ մեկը չի հանդիսացել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի լուծարված ընկերության բաժնետեր կամ մասնակից կամ գործունեությունը դադարեցրած (պետական հաշվառումից հանված) անհատ ձեռնարկատեր:

4) բաժնետերերից (մասնակիցներից) որևէ մեկը չի հանդիսանում սույն օրենքի պահանջներին համապատասխան հավաստագրված այլ ընկերության բաժնետեր կամ մասնակից կամ անհատ ձեռնարկատեր:

5) բաժնետերերից (մասնակիցներից) որևէ մեկը կամ հավաստագրման համար դիմած անհատ ձեռնարկատերը չի հանդիսանում սնանկության գործընթացում գտնվող այլ տնտեսավարող սուբյեկտի բաժնետեր կամ մասնակից:

6) աշխատողների թիվը չի գերազանցում 30-ը:

7) հավաստագրման համար չեն կարող դիմել այն կազմակերպությունները, որոնց բաժնետերերից (մասնակիցներից) որևէ մեկը դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում և (կամ) դիմելու պահին հանդիսանում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացրած (իրականացնող) այլ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր կամ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացրած (իրականացնող) այլ կազմակերպության բաժնետեր կամ մասնակից:

8) հավաստագրման համար չի կարող դիմել այն անհատ ձեռնարկատերը, որը դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում հանդիսացել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացրած և գործունեությունը դադարեցրած (պետական հաշվառումից հանված) անհատ ձեռնարկատեր:

9) հավաստագրման համար չեն կարող դիմել այն կազմակերպությունները, որոնց բաժնետերերի 20 և ավելի տոկոս բաժնեմասը պատկանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի այլ կազմակերպության, կամ որոնց բաժնետերերից (մասնակիցներից) որևէ մեկին պատկանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի այլ կազմակերպության 20 և ավելի տոկոս բաժնեմասը:

4. Հավաստագրի գործողության ընթացքում հիմնական միջոցների օտարումը, ինչպես նաև համատեղ գործունեության պայմանագրի կնքումը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գործունեության տեսակներից դուրս իրականացվող այլ գործունեություն է:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով սահմանված աշխատողների թիվը հավաստագրի գործողության ընթացքում չի կարող գերազանցել 30-ը:

6. Հավաստագրված անձինք՝

1) պարտավոր են հավաստագրի գործողության ընթացքում պահպանել սույն հոդվածի 2-5-րդ մասերում նշված պահանջները:

2) չեն կարող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող այլ տնտեսավարող սուբյեկտներին օտարել սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գործունեության արդյունքները, բացառությամբ կրթական ծրագրերի իրականացման դեպքերի:

(8-րդ հոդվածը լրաց., խմբ. 01.03.17 ՀՕ-47-Ն, խմբ. 23.04.19 ՀՕ-22-Ն)

Հոդված 9.

Հավաստագրման հանձնաժողովը

1. Հավաստագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ձևավորված հանձնաժողովը:

Հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից, որում ընդգրկվում են՝

1) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչը:

2) ոլորտի զարգացման համար պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի երկու ներկայացուցիչը:

3) (կեսն ուժը կորցրել է 16.12.22 ՀՕ-570-Ն)

3.1) հարկային և մաքսային ոլորտներում վարչարարություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացուցիչը:

4) ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների շահերը ներկայացնող միավորումների և ոչ առևտրային կազմակերպությունների երեք ներկայացուցիչ:

Հանձնաժողովի կազմում ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների շահերը ներկայացնող միավորումների և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկման կարգը և պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հրավերով պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացուցիչը խորհրդակցական ծային իրավունքով կարող է մասնակցել հանձնաժողովի նիստերին:

2. Հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի բոլոր անդամների մասնակցության դեպքում, իսկ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի բացակայության դեպքում նիստը համարվում է չկայացած, և նշանակվում է նոր նիստ: Հանձնաժողովի անդամները կարող են օրենքով սահմանված կարգով լիազորել այլ անձանց իրենց անունից հանձնաժողովի նիստին մասնակցելու համար, ընդ որում, եթե հանձնաժողովի անդամը 2 անգամ անընդմեջ բացակայում է և չի լիազորում այլ անձանց իր անունից հանձնաժողովի նիստին մասնակցելու համար, ապա նշված հանգամանքը հանձնաժողովի նիստը չկայացած համարելու հիմք է:

3. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ծայերի պարզ մեծամասնությամբ:

4. Հանձնաժողովի յուրաքանչյուր նիստի համար կազմվում է արձանագրություն: Արձանագրությունները ստորագրում են նիստին մասնակցած անդամները:

5. Հանձնաժողովի նիստերի հրավիրման և այլ ընթացիկ աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովի քարտուղարությունը: Հանձնաժողովի քարտուղարություն է հանդիսանում ոլորտի զարգացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

6. Հանձնաժողովը հավաստագրի տրամադրման կամ մերժման մասին որոշումը պարտավոր է ընդունել հավաստագրի տրամադրման մասին դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում:

(9-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.03.17 ՀՕ-47-Ն, փոփ. 21.01.20 ՀՕ-60-Ն, լրաց., փոփ. 16.12.22 ՀՕ-570-Ն)

Հոդված 10. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) ուսումնասիրում և քննարկում է հավաստագրման համար ներկայացված դիմումները:

2) սույն օրենքով սահմանված կարգով որոշում է ընդունում հավաստագրի տրամադրման, փոփոխման կամ մերժման մասին:

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնում է առաջարկություններ հավաստագրման գործընթացի կազմակերպման, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը նպաստող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Հոդված 11. Հավաստագրի տրամադրումը և փոփոխումը

1. Հավաստագրումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պահանջները բավարարող տնտեսավարող սուբյեկտները հավաստագրման համար պարտավոր են դիմել պետական գրանցման պահից 3-ամսվա ընթացքում:

3. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը հավաստագրված անձը պարտավոր է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ձևով հայտարարություն այն մասին, որ բավարարում է սույն օրենքով հավաստագրված անձանց ներկայացվող պահանջները:

4. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պահանջները բավարարող տնտեսավարող սուբյեկտները հավաստագրի ստանալու համար պարտավոր են ներկայացնել՝

1) դիմում հավաստագրի ստանալու մասին:

2) իրավաբանական անձանց պետական գրանցման համարը:

3) տնտեսավարող սուբյեկտի գործունեության մանրամասն նկարագրությունը և ուղղությունները՝ ըստ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գործունեության տեսակների:

4) հայտարարություն այն մասին, որ տնտեսավարող սուբյեկտը հավաստագրով տրամադրված արտոնություններից օգտվելու ժամանակահատվածում զբաղվելու է միայն սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գործունեության տեսակներով:

5) տեղեկանք աշխատողների քանակի, պաշտոնների անվանումների և աշխատողների անուն-ազգանունների մասին:

6) հայտարարություն այն մասին, որ տնտեսավարող սուբյեկտի ստեղծումը հիմք է ալ տնտեսավարող սուբյեկտի լուծարման կամ վերակազմակերպման համար, ինչպես նաև, որ տնտեսավարող սուբյեկտը այլ ընկերության դուստր-ընկերություն չէ:

7) հավաստագրման համար դիմած տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տվյալները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով:

5. Այն դեպքում, երբ հավաստագրված անձը հավաստագրի գործողության ընթացքում որոշում է զբաղվել հավաստագրման ժամանակ չներկայացված, սակայն սույն օրենքի համաձայն հավաստագրման ենթակա գործունեության տեսակներով, ապա վերջինս պարտավոր է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով դիմել հանձնաժողով՝ հավաստագրի փոփոխության համար:

(11-րդ հոդվածը փոփ. 01.03.17 ՀՕ-47-Ն, 23.04.19 ՀՕ-22-Ն)

Հոդված 12. Հավաստագրի տրամադրման մերժումը

1. Հավաստագրի տրամադրման դիմումը մերժվում է, եթե՝

1) հավաստագրման համար դիմած տնտեսավարող սուբյեկտը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված՝ հավաստագիր ստանալու իրավունք ունեցող տնտեսավարող սուբյեկտներին՝ ներկայացվող պահանջներին:

2) հավաստագիր ստանալու համար դիմումը ներկայացվել է սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ:

3) հավաստագրման համար ներկայացված փաստաթղթերը թերի են, արժանահավատ չեն և չեն համապատասխանում սույն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

4) հավաստագրման համար դիմած տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեցող անձինք նախկինում խախտել են սույն օրենքի պահանջները:

5) հավաստագրման համար դիմած տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեցող անձանցից որևէ մեկը նախկինում ունեցել է ուղղակի կամ անուղղակի մասնակցություն սույն օրենքի պահանջները խախտած այլ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում:

6) նախկինում դադարեցվել է տնտեսավարող սուբյեկտին տրամադրված հավաստագրի գործողությունը սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով:

1.1. Հավաստագրի տրամադրման դիմումի մերժման հիմք չի կարող հանդիսանալ, բացառությամբ 8-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ, 5-րդ կետերով և 7-9-րդ մասերով նախատեսված դեպքերի՝

1) հավաստագրման համար դիմած տնտեսավարող սուբյեկտի բաժնետիրոջ (մասնակցի) այլ տնտեսավարող սուբյեկտի բաժնետեր կամ մասնակից հանդիսանալը կամ այլ ընկերության աշխատող հանդիսանալը:

2) հավաստագրման համար դիմած տնտեսավարող սուբյեկտի մոտ կամ այլ ընկերությունում համատեղությամբ աշխատող հանդիսանալը:

2. Այն դեպքում, երբ առկա են սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված մերժման հիմքերը, ապա հանձնաժողովը կասեցնում է վերջնական որոշման կայացումը և հանձնաժողովի քարտուղարության միջոցով հավաստագրման համար դիմած տնտեսավարող սուբյեկտին գրավոր ներկայացնում է փաստաթղթերում առկա թերություններին և անհամապատասխանություններին՝ վերացման մասին առաջարկ: Հանձնաժողովի քարտուղարության առաջարկը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, տնտեսավարող սուբյեկտի կողմից թերությունները և անհամապատասխանությունները չվերացվելու դեպքում դիմումը մերժվում է:

(12-րդ հոդվածը լրաց. 01.03.17 ՀՕ-47-Ն, 23.04.19 ՀՕ-22-Ն)

Հոդված 13. Հավաստագրի գործողության դադարեցումը

1. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) ավարտվել է հավաստագրի գործողության ժամկետը:

2) տնտեսավարող սուբյեկտը ներկայացրել է դիմում հավաստագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ:

3) հավաստագրի գործողության ընթացքում խախտվել են սույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջները:

4) տնտեսավարող սուբյեկտը խախտել է սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

5) տնտեսավարող սուբյեկտը հավաստագրման համար ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով նախատեսված դեպքերում հավաստագրի գործողությունը դադարեցվում է հանձնաժողովի որոշմամբ:

(13-րդ հոդվածը փոփ. 23.04.19 ՀՕ-22-Ն)

Հոդված 14. Հավաստագրված անձանց կողմից հաշվետվությունների ներկայացումը

1. Հավաստագրված անձինք պարտավոր են հանձնաժողովին յուրաքանչյուր կիսամյակ՝ մինչև յուրաքանչյուր կիսամյակը հաջորդող ամսվա 20-ը, ներկայացնել հավաստագրի գործողության ընթացքում ստացված արդյունքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով այլ տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություններ:

2. Սույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված կարգով հավաստագրի գործողության դադարեցման դեպքում հավաստագրված անձինք պարտավոր են ներկայացնել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված

հաշվետվությունը հավաստագրի դադարեցման մասին հանձնաժողովի որոշումն ստանալու պահից 15 օրյա ժամկետում, իսկ սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ հավաստագրի գործողության դադարեցման մասին դիմումի հետ:

(14-րդ հոդվածը լրաց. 01.03.17 ՀՕ-47-Ն)

Հոդված 15. Հրապարակայնությունը

1. Հավաստագրված, ինչպես նաև հավաստագրի համար դիմած և մերժված անձանց ցուցակը հրապարակվում է ոլորտի զարգացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի պաշտոնական կայքում:

2. Ոլորտի զարգացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի պաշտոնական կայքում հրապարակվում են նաև սույն օրենքի պահանջները խախտած տնտեսավարող սուբյեկտների անվանումները, այդ թվում՝ տվյալ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեցող անձանց անվանումները կամ անունները:

(15-րդ հոդվածը փոփ. 01.03.17 ՀՕ-47-Ն, լրաց. 23.04.19 ՀՕ-22-Ն)

Հոդված 16. Տեղեկությունների տրամադրումը

1. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցում (հաշվառում) իրականացնող մարմինը պարտավոր է ոլորտի զարգացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման վերաբերյալ տեղեկություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Հարկային մարմինները պարտավոր են սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված, իրենց մոտ առկա տեղեկությունները յուրաքանչյուր եռամսյակ տրամադրել ոլորտի զարգացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 17. Պատասխանատվությունը սույն օրենքի դրույթները խախտելու համար

1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

2. Այն դեպքում, երբ սույն օրենքի խախտման հետևանքով դադարեցվել է հավաստագրի գործողությունը, ապա պետական բյուջե են վճարվում հավաստագրի գործողության ընթացքում որպես հարկային արտոնություն ստացված և պետական բյուջե չվճարված հարկերի գումարները, ինչպես նաև հարկային հարաբերությունները կարգավորող օրենքով սահմանված տույժերը և տուգանքները:

Հոդված 18. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքով սահմանված կարգով հավաստագրի տրամադրման դիմումների ընդունման վերջին ժամկետ սահմանվում է 2024 թվականի նոյեմբերի 1-ը:

3. (մասն-ուժը կորցրել է 22.12.23 ՀՕ-420-Ն)

4. (մասն-ուժը կորցրել է 22.12.23 ՀՕ-420-Ն)

5. Սույն օրենքի համաձայն տրամադրված հավաստագրերը գործում են դրանց տրամադրման օրվանից 5 տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

(18-րդ հոդվածը փոփ. 01.03.17 ՀՕ-47-Ն, փոփ., լրաց. 23.04.19 ՀՕ-22-Ն, փոփ., խմբ., լրաց. 16.12.22 ՀՕ-570-Ն, փոփ., լրաց. 22.12.23 ՀՕ-420-Ն)

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը) և կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները:

Նախագծի նպատակը բարձր տեխնոլոգիաների ոլորտում պետական աջակցության տրամադրման գործիքակազմի բարելավումն է և օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների վերացումը և հստակեցումը:

Բովանդակային առումով Նախագծով նախատեսված փոփոխությունների արդյունքում՝

1) Օրենքի կարգավորումներից հանվում է քաղաքացիական իրավական պայմանագրին համապատասխան աշխատանքներ կատարող վարձու աշխատողների համար պետական աջակցության տրամադրմանն առնչվող կարգավորումները: Այս փոփոխության նախատեսման նպատակը կայանում է նրանում, որ աջակցության տրամադրման ընթացքում քաղաքացիական իրավական պայմանագրերով աշխատանքներ կատարող վարձու աշխատողների՝ հարթակի միջոցով նույնականացումը չի ստացվում, քանի որ հարկային մարմնի ոչ անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում այդ պայմանագրերով աշխատողների միայն թվաքանակն է ընդգրկված, և այս պարագայում լիազոր մարմինը ստիպված է լինում աջակցության համար դիմող տնտեսավարող սուբյեկտներից ստանալ վերջիններիս պայմանագրերը, ինչը խնդրահարույց է և ոչ նպատակահարմար:

Բացի այդ 2025 թվականի երեք եռամսյակների վերլուծության արդյունքում դրանց թիվը բավականին փոքր է, ինչը էական ազդեցություն չունի ոլորտի պետական աջակցության հասցեականության վրա:

2) Օրենքի կարգավորումներում աջակցության գումարի հաշվարկման գործակից համարվող աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարներումների գծով (ԱՎՈՒՄ) հաշվարկված եկամտային հարկի գումարի փոխարեն նախատեսվում է հաշվարկն իրականացնել բոլոր տեսակի վճարներից հաշվարկված և հարկային մարմնին ներկայացված եկամտային հարկի գումարը: Այս կարգավորման նախատեսման նպատակը կայանում է

նրանում, որ ՊԵԿ տվյալների բազայում ԱՎՈՒՄ-ի համար հաշվարկված եկամտային հարկը առանձին չի հաշվառվում և այդ պատճառով դժվարություններ են ստեղծվում Հարթակի կողմից ՊԵԿ տվյալների շտեմարանից հարցումների կատարման ժամանակ, մասնավորապես այդ մասով հաշվարկն իրականացվում է նախարարության աշխատակիցների կողմից, այսինքն, այդ մասով՝ ստացվում է ոչ ինքնաշխատ: (Օրինակ, նշվածը վերաբերում է այն դեպքերին, որ աշխատողները բացի աշխատավարձից և դրանց հավասարեցված վճարներից գործատուից ստացել են նաև աշխատավարձ չհամարվող այլ եկամուտ, որի կապակցությամբ ևս հաշվարկվել է եկամտային հարկ, իսկ ՊԵԿ տվյալների բազայում դրանք առանձին չեն ներկայացվում, որ հնարավոր լինի ԱՅ ՓԻ-ների միջոցով ստանալ:) Բացի դրանից, նախորդ աջակցությունների տրամադրման վերլուծությամբ պարզ է դարձել, որ դրանց տարբերությունը շատ փոքր է:

3) Օրենքի կարգավորումներից հանվում է վերապատրաստման համար տրամադրվող պետական աջակցությանն առնչվող կարգավորումները, քանի որ ըստ լիազոր մարմնի գնահատման, այն չի արդարացնում ի սկզբանե դրված նպատակը: Այնուամենայնիվ, նշվածի համատեքստում քննարկվում և մշակվում են ոլորտում կրթական բաղադրիչի ներառմանն ուղղված աջակցությունների հնարավոր մեխանիզմներ:

4) Նախագծում վերաշարադրվում է նոր աշխատողի հասկացությունը, ըստ որի՝ նոր աշխատողը դա մասնագիտական աշխատանք կատարող այն վարձու աշխատողն է, ով աշխատանքի ընդունման տարվան նախորդող **չորս տարիների** ընթացքում բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող գործատուի մոտ վարձու աշխատող չի հանդիսացել, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող գործատուի աշխատանքի է ընդունվել 2024 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

Նոր աշխատողներ ներգրավելու կապակցությամբ կարգավորում է սահմանվում նաև նախագծի անցումային դրույթներով, ըստ որի հնարավորություն է տրվում, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Տնտեսավարող սուբյեկտը կարող է դիմել պետական աջակցության համար 2025 թվականի հունվարի 1-ից հետո բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած նոր աշխատողի համար, եթե տվյալ նոր աշխատողի նախկին գործատու տնտեսավարող սուբյեկտը իր մասով չի ստացել պետական աջակցություն:

5) Փոփոխություն է նախատեսվում նաև աշխատանքային միգրանտին տրամադրվող աջակցության ձևի մեջ, մասնավորապես՝ պետական աջակցության գումարները փոխանցվում են տնտեսավարող սուբյեկտին՝ որպես միջնորդ՝ աշխատանքային միգրանտին փոխանցելու նպատակով: Ընդ որում տնտեսավարող սուբյեկտը պետական աջակցության գումարը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետք է փոխանցի աշխատանքային միգրանտին: Այս դեպքում պետական աջակցության գումարների մասով գործատու հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի, ինչպես նաև վարձու աշխատող աշխատանքային միգրանտի համար հարկային պարտավորություն չի առաջանում:

6) Նախատեսվում է, որ պետական աջակցության համար կարող են դիմել նաև դուստր ընկերությունները, իրավաբանական անձանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները:

7) Նախատեսվում է, որ պետական աջակցության տրամադրման ժամանակ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար պետական աջակցության գումարի ավել վճարված գումարը ենթակա է հաշվանցման հաջորդ հաշվետու ժամանակաշրջանների մասով տրամադրման ենթակա պետական աջակցության գումարից:

Բացի այդ, Նախագծով հստակեցվում են պետական աջակցության տրամադրման մերժման և դադարեցման հիմքերը:

Մասնավորապես՝ պետական աջակցության մերժման հիմք է նաև տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ներառված ամիսների համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն հարկային հաշվարկ չներկայացնելը, իսկ դադարեցման հիմքերում լրացվում են հետևյալ կարգավորումները.

- պետական աջակցություն ստանալու համար տնտեսավարող սուբյեկտը կամ աշխատանքային միգրանտը ներկայացրել են ոչ հավաստի տեղեկություններ,

- կատարել են այնպիսի գործողություններ, որոնց չկատարման դեպքում հնարավոր չէր լինի պետական աջակցություն ստանալը կամ պետական աջակցության գումարի չափի ավելացումը,

- պետական աջակցության տրամադրման տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տնտեսավարող սուբյեկտը նախորդող ժամանակաշրջանների մասով գրանցման հայտերում կատարել է մասնագիտական պաշտոնների դասակարգիչների փոփոխություն, իսկ հարկային հաշվարկներում՝ տնտեսական գործունեության տեսակի

դասակարգչի փոփոխություն, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվել պետական աջակցության ստացման կամ պետական աջակցության չափի ավելացման համար:

8) Փոփոխություններ են նախատեսվում նաև պետական աջակցության տրամադրման մի շարք կարգավորումներում, մասնավորապես՝ հստակեցվում են պետական աջակցության տրամադրման վարչարարական ընթացակարգերը, բողոքարկումը, մոնիտորինգը և այլն:

9) Նախագծի Անցումային դրույթներով սահմանվում է, որ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանին առնչվող կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված վարչական վարույթում քննարկվող ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական ատյաններում քննվող գործերի նկատմամբ: Հիշյալ կարգավորման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ գործող օրենսդրությամբ ներկայացված համանման ձևակերպումները իրավակիրառ պրակտիկայում առաջացրել էին տարընթերցումներ և մեկնաբանվում էր ոչ միատեսակ, ինչը առաջ էր բերել վարչարարական քննարկումների, պարզաբանումների անհրաժեշտության, բողոքարկումների՝ ընդհուպ առկա է նաև դատական պրոցես: Մինչդեռ կարևոր է ընդգծել, որ 2025 թվականի հունվարի 1-ից ի վեր Օրենքով սահմանված աջակցության տրամադրումն իրականացվել է Նախագծով նախատեսված հիշյալ կարգավորման տրամաբանությամբ, այսինքն Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև Նախագծի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով ընդամենը հստակեցվել են գործող օրենքի հաշվետու ժամանակաշրջանին առնչվող կարգավորումները: Ինչով պայմանավորված, խնդրահարույց իրավիճակներից խուսափելու նպատակով, Նախագծով նախատեսվել է նաև ընդգծել, որ դրանք տարածվում են նաև չավարտված գործերի վրա:

10) Կատարվում են նաև մի շարք տեխնիկական փոփոխություններ և լրացումներ:

11) Հաշվի առնելով, որ 2025 թվականի մարտից սկսած այլևս ժամկետային առումով ավարտվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներով սահմանված ոլորտային աջակցության ծրագրերը, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքը: Հարկ է նկատել, որ այն

դեռևս ուժը կորցրած չի ճանաչվել քանի, որ աջակցություն նախատեսող հիշյալ որոշումների լիազորող նորմը սահմանված էր այդ օրենքով:

2. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան բարձր տեխնոլոգիական ոլորտի պետական աջակցության գործիքակազմի բարելավումն է և խնդրահարույց իրավիճակների բացառումը:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագծերը մշակվել են ԱԺ պատգամավորների և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից համատեղ:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջանցիկ զարգացման համար ձևավորել առավել նպաստավոր պայմաններ: Ակնկալվում է նաև, որ պետական աջակցության տրամադրման ընթացակարգում կբացառվեն խնդրահարույց իրավիճակները: Աջակցության տրամադրումը կլինի առավել հասցեական: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում կխթանվեն ՀՀ քաղաքացիություն ունեցող նոր աշխատողների ներգրավումը:

5. Առաջարկվող կարգավորման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա.

Սույն իրավական ակտի ընդունման արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա էական ազդեցություն չի նախատեսվում:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծը բխում է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի մի շարք բաժիններով սահմանված քաղաքականության ուղղություններից: Մասնավորապես՝

1) 2.3-րդ «Բարձր տեխնոլոգիաներ» բաժնով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի՝

- հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների կարևորությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության և անվտանգության համար՝ Կառավարությունը շարունակելու է

նպաստել նորարարական համակարգի զարգացմանը և տարբեր ոլորտներում համակողմանի ներդրմանը,

- բարձր տեխնոլոգիաների ոլորտում մինչև 2026 թվականը Կառավարությունը նախատեսում է ունենալ շուրջ 35,000 զբաղվածներ և ոլորտի շրջանառությունը հասցնել 500 մլրդ դրամի, որը կկազմի ՀՆԱ-ի 6-7%-ը: 2020 թվականի տվյալներով այս ցուցանիշը 4% է: Այսպիսով, Հայաստանում կստեղծվի առնվազն 16,000 նոր աշխատատեղ բարձր տեխնոլոգիաների ոլորտում,

- բարձր տեխնոլոգիաների ոլորտում Կառավարությունը նպատակադրված է իրականացնել, մասնավորապես, հետևյալ քայլերը.

- բարձր տեխնոլոգիական ոլորտում տեխնոլոգիական կրթության որակական և քանակական բարելավում,

- բարձր տեխնոլոգիական ընկերություններում (ստարտափներում) անհրաժեշտ ներդրումներ ներգրավելու և դրանց հետագա զարգացումն ու համաշխարհային շուկա ելքն ապահովելու նպատակով ֆինանսական գործիքներ ներգրավելու հնարավորությունների շարունակական մեծացում, այդ թվում՝ պետական աջակցության ծրագրերի միջոցով,

- բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջանցիկ զարգացման նպատակով տեխնոլոգիական ընկերությունների և բուհերի արդյունավետ համագործակցության խթանում՝ նոր մասնագետների պատրաստման և այլ ոլորտի մասնագետներին վերամասնագիտանալու հնարավորություն ընձեռելու միջոցով,

- ոլորտի ընկերությունների բիզնես կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում,

2) 6.8-րդ «Հարկաբյուջետային քաղաքականություն» մասով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի՝

- Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակը պետական ֆինանսական համակարգի բարձր արդյունավետությունն է: Դրան հասնելու նպատակով Կառավարությունը շարունակելու է հարկային քաղաքականության այնպիսի բարեփոխումները, որոնք նպաստելու են բիզնես միջավայրի մրցունակության բարձրացմանը,

- Կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է լինելու տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական

ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: